ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի 16.03.2026թ. նիստի

Սկիզբ՝ 10:30
Ավարտ՝ 12:20

Նիստի օրակարգը

1. 2025թ.-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացված ծրագրերի ներկայացում
2.Հարց ու պատասխան
3.ՀՀ Արդարադատության նախարարության 2026թ. առաջնահերթությունները, այդ թվում՝ ՀՀ կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով Նախարարության կողմից իրականացման ենթակա միջոցառումների վերաբերյալ քննարկում
4.Հարց ու պատասխան

Նիստը վարում էր ՀՀ արդատարդատության նախարար Սրբուհի Գալյանը

Նիստին մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

1. Թերեզա Գալստյան - «Արդարության տուն» իրավապաշտպան ՀԿ
2. Նարինե Ավետիսյան - «Բարեվարքություն հանուն զարգացման» ՀԿ
3. Արմեն Տեր-Տաճատյան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
4. Տաթևիկ Խաչատրյան - «Ժողովրդավարության զարգացման» հիմնադրամ
5. Մարատ Ատովմյան - «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
6. Գուրգեն Գրիգորյան - «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ
7. Արմենակ Դավթյան - «Հանուն ազատության» իրավական ՀԿ
8. Լիրա Հարությունյան – ֆիզիկական անձ
9. Նարե Հովհաննիսյան - «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան ՀԿ
10. Արթուր Հովհաննիսյան - Հայաստանի գործատուների հանրապետական միություն
11. Ստյոպա Սաֆարյան - Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ հիմնադրամ
12. Արաքս Մելքոնյան - «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
13. Արթուր Վարդերեսյան - ֆիզիկական անձ
14. Գայանե Մկրտչյան - Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

15. Արմեն Հարությունյան - «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» ՀԿ
16. Աննա Հովհաննիսյան - «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ
17. Արնոլդ Բլեյան - ֆիզիկական անձ

Նախարարության ներկայացուցիչներ

Մարիամ Մելքումյան – նախարարի մամուլի քարտուղար
Եվա Գրիգորյան – նախարարի օգնական
Գևորգ Ղուկասյան - նախարարի օգնական
Զարուհի Սարգսյան – խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, հասարակական խորհրի պատասխանատու
Գոհար Մովսիսյան – խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, հասարակական խորհրդի համակարգող

Մինչ նիստի օրակարգային հարցերին անդրադառնալը, նախարարը ողջունեց ներկաներին՝ կարևորելով համագործակցությունը ոլորտում բարեփոխումների իրականացման և առկա խնդիրներ լուծման գործում:

Ս.Գալյանը ներկայացրեց 2025թ. նախարարության կողմից իրականացված ծրագրերն ու աշխատանքները, ինչպես նաև՝ 2026 թվականի համար սահմանված առաջնահերթությունները՝ կարևորելով ՀՀ Կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով նախարարության կողմից իրականացման ենթակա միջոցառումները: Մասնավորապես քննարկվեցին՝

- արդարադատության ոլորտի թվայնացման աշխատանքներ
    - վարչ. դատ. ոլորտի գործընթացներ
    - հաշտարարության էլեկտրոնային հարթակի գործարկում
    - arlis.am և e-draft.am հարթակների աշխատանքների բարելավում
    - իրավաբանական անձանց պետական ռեգիստրի նոր էլեկտրոնային համակարգի գործարկում և այլն

  Թվայնացման գործընթացը շարունակական է
- բարձրաստիճան պաշտոնատար անձանց բարեվարքության ստուգման մեխանիզմների սահմանում
- դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված քայլեր, վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում ներդրված գործերի քննության ողջամիտ ժամկետների կարգավորումների սահմանում
- քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների ռազմավարական ուղղությունների բարեփոխումներ, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի լավարկում

- հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում իրականացվող միջոցառումները
- ԵՄ վիզաների ազատականացմանն ուղղված աշխատանքներին գործուն մասնակցություն
- սահմանադրական բարեփոխումներ:

Ներկայացված թեմաների շուրջ ծավալվեց քննարկում, խորհրդի անդամների կողմից հնչեցին առաջարկներ, ինչպես նաև տրվեցին հարցեր՝ նոտարների գործունեության, նախարարության ռազմավարության, տնային կալանքում գտնվող անձանց ընտրելու իրավունքի իրացման, ՔԿ և պրոբացիայի ծառայողների ատեստավորման, հաշտարարության վերաբերյալ և ոլորտին առնչվող այլ հարցեր:

Նիստի ավարտին նախարարը շնորհակալություն հայտնեց ակտիվ մասնակցության, քննարկումների և սրտացավ վերաբերմունքի համար՝ ակնկալելով սերտ համագործակցություն և ներգարվվածություն նախարարության կողմից իրականացվող ծրագրերի իրականացմանը:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆ**